

Եզնիկի գրածները Մարկիոնի եւ մարկիոնականների մասին եւ զարմանում Մարիէսի՝ նրա «Ջանքին» տուած բնորոշման վրայ:

Մարիէսին թւում է նաեւ, թէ ամբարտաւանութեան յատկանիշն աւելի յարմար է Մարկիոնին քան Պղատոնին, որովհետեւ Եզնիկը Պղատոնին խիստ քննադատում է, բայց ոչ հպարտութեան կամ ամբարտաւանութեան համար. ընդհակառակն, նա «յօժարեցաւ» խօսել Աստուծոյ եւ նրա արարածների մասին: Այս բոլորին պատասխանեցինք վերելում: Մարիէսը Մարկիոնի ամբարտաւանութեան գիծ է համարում նրա «սատանայական համարձակութիւնը», եւ Եզնիկից մէջ է բերում մի երկար, բայց անտեղի հատուած, ուր կարդում ենք այն տողերը, որ նշեցինք քիչ առաջ՝ Մարկիոնին իբրեւ մարդ «վատքարագոյն քան գամեմայն մարդիկ» եւ «... այնչափ յանդգնեալ սատանայութեան ռգումն...» (1928, էջ 105): Կարծում ենք, որ սրանք Մարկիոնի այնպիսի յատկանիշներ չեն, որպէսզի Եզնիկը նրա մասին գրէր. «Զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ»: Ընդհակառակն:

Վերջացնում ենք յարգելի եւ լուրջ հայադէտ Ե. Տէր-Մինասեանի հետեւեալ կարծիքով, որուն համամիտ ենք. «Այս մասում, ինչպէս երեւում է Եզնիկի խօսքերից, նա գրել է կամ մտադրութիւն է ունեցել գրելու, յատկապէս նաեւ, Պղատոնի դէմ — «Եւ արդ ընդ նմա (ընդ Պղատոնի) իսկ մարտիցուք գոռութեան բանիւք», բայց այժմեան Եզնիկում այդ հատուածը բացակայում է, այսինքն՝ հերքումն սկզբում է, բայց մի երկու նախադասութիւնից յետոյ կտրւում է»¹⁶:

Երուսաղէմ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

9

16. Ե. Տէր-ՄինԱՍԵԱՆ, Պատմաբանասիրական հետազոտութիւններ, Երեւան, 1971, էջ 300-301:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՐՋԵՑՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցական ուսումներու մարզին մէջ վերջին երեսնամեակը յատկապէս բեղուն շրջան մը հանդիսացաւ: Մանաւանդ սուրբգորական, ծիսական, եկեղեցապատմական եւ հայրախօսական ուսումները նշեցին հսկայաքայլ յառաջդիմութիւններ, որոնց հիմերը զետեղուած էին արդէն երկու աշխարհամարտերու միջանկեալ տարիներուն: Կարելի է անվարան հաստատել թէ ի. դարուն՝ եկեղեցական ուսումները ապրեցան վերադարձումի եւ յեղաշրջումի շրջան մը, որ անկիւնադարձային հանգամանք մը կը կրէ: Այս յեղաշրջումը արդիւնքն էր զլիաւորապէս զիտական նոր մտայնութեան մը երեւումին՝ իրեն յարակից նորութիւններով մեթոտի եւ նիւթի մերձեցումի, ինչպէս եղած էր Վերածնունդի շրջանին բնական գիտութիւններու համար: Եկեղեցական ուսումներու մէջ յայտնուող նոր մտայնութիւնը վարակուած էր քննական այն նոր ըմբռնումներէն՝ որոնք ԺԹ. դարուն յեղաշրջած էին պատմական ուսումները եւ որ հետզհետէ կը ծաւալէին իրենց ազդեցութիւնը պատմաբանասիրական ուսումներու այլեւայլ ճիւղերուն:

Քննական մտայնութեան բերած մեթոտի եւ մերձեցումի հիմնական նորութիւնները կարելի է խտացնել մեծագոյն առարկայակցութեան մը եւ հեղինակի մտքին աւելի համապատասխան թափանցումի մը աւելի զիտակցօրէն զգացուած եւ դրականօրէն ըմբռնուած պահանջին մէջ: Ասիկա կը նշանակէր տակաւ ձերբազատում մը դաւանական (dogmatique) մտայնութենէն եւ ասոր ներփակած ի յառաջագունեան ընթացակերպէն, որոնք կը տիրապետէին յատկապէս դաւանաբանական աղբիւրներու, ինչպէս են Ս. Գիրքը եւ Ս. Հայրերը, մեկնաբանութեան մէջ: Նկատառումը՝ հեղինակներու ապրած դարաշրջաններուն ընկերային ու տնտեսական պայմաններուն, դա-

դատարաններու եւ վարդապետութիւններու ղեկավարութեամբ այդ պատմական-ընկերային շրջածիրին մէջ եւ պրպտութեամբ անոնց ծագումին, ազգակցութիւններուն եւ յեղաշրջումին, բնագիւղներու մանրագնին ուսումնասիրութիւնը՝ լեզուական, ոճային, կազմաւորման ու խմբագրութեան տեսակէտներէն, այդ առարկայականութեան փնտռութիւնը գլխաւոր արտայայտութիւնները եղան:

Բոլոր այս տուեալները յաճախ նոր լոյս մը սփռեցին Ս. Գիրքի, Ս. Հայրերու, ինչպէս նաեւ պատմական եղելութիւններու վրայ: Այս ըսել չէ, անշուշտ, թէ ամէն անգամ երեւան եկան նոր մեկնաբանութիւններ, բայց, ամէն պարագայի, Ս. Գիրքը եւ Ս. Հայրերը, աստուածաբանական գիտութեան համար, դադրեցան նկատուելի նախ եւ առաջ իբրեւ վաւերացողութիւն, որոնք հաւաստիք կ'ընծայեն հաստատուած վարդապետութեան մը, եւ ուսումնասիրներու ուշադրութիւնը կեդրոնացաւ որոնելու անոնց մէջ՝ ինչ որ անոնց արտայայտութեան հարազատ եւ ինքնատիպ գոյնը կը կազմէ:

Հայ Եկեղեցւոյ Հայրախօսութիւնը եւ դաւանական յեղաշրջումը անցեալի մէջ նիւթ դարձած են հմտալից ուսումնասիրութիւններու: Բայց ասոնք կը մեկնէին յաճախ՝ աւելի որոշ դրոյթ մը փաստարկելու մտահոգութենէն՝ քան թէ հեղինակ մը կամ վարդապետութիւն մը իրենց ինքնատուութեան մէջ ճանչնալու տենչէն: Ուստի ԺԹ. դարուն եւ Ի. դարու առաջին տասնամեակներուն՝ ականաւոր պրպտողներու կողմէ հայ եկեղեցական բանասիրութեան նուիրուած հսկայ վաստակը կը կարօտի վերամշակումի մը՝ աւելի արդիական մերձեցումով մը: Ներկայ ուսումնասիրութիւնը կ'ուզէ այս կարգի համեստ փորձ մը ըլլալ՝ Ե. դարու մեր եկեղեցական պատմութեան ու գրականութեան կարկառուն դէմքերէն Յովհան Մանդակունիի տեսութեան շուրջ Ս. Հաղորդութեան խորհուրդին մերձեցումի մասին:

* * *

Զատկական խորհուրդը, որ կը կազմէ կատարը Քրիստոսի փրկականործ տնօրէնութեան, կ'ընդգրկէ անբաժանելի միութեան մը մէջ Անոր երկրաւոր կեանքին վերջին փուլերը մինչեւ իր յարութիւնը: Զատկական խորհուրդին այս միաձոյլ ամբողջութեան մէջ՝ անոր գլխաւոր բեւեռներէն մին կը կազմէ Ս. Հաղորդութեան խորհուրդը:

Փրկագործութիւնը Սիրոյ խորհուրդն է, Սիրոյ Յայտնութիւնն է: Անկախաբար այն ըմբռնումէն, արժէքաւորումի եղանակէն կամ հաւատքէն՝ զոր իւրաքանչիւր մարդ կրնայ ունենալ Քրիստոսի անձին ու գործին մասին, կարելի չէ չտեսնել Գողգոթայի տրամին մէջ սիրոյ արտայայտութիւն մը, վկայութիւն մը: Այն սիրոյն՝ որ կորիզը կազմած էր Քրիստոսի քարոզութեան ու բերեղացած սա խօս-

քերուն մէջ. «Ոչ ոք ասկէ աւելի մեծ սէր ունի՝ երբ իր կեանքը կու տայ բարեկամներու համար» (Յովհ. ԺԵ, 13) եւ «Ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ զիրար սիրեցէ՛ք: Ամէնքը ասով պիտի ճանչնան՝ թէ դուք իմ աշակերտներս էք, եթէ զիրար սիրէք» (Յովհ. ԺԳ, 34-35):

Ս. Հաղորդութիւնը Գողգոթայի վրայ արտայայտուող այս սիրոյն մնայուն խորհրդանշը, դարերու տեւողութեամբ մարդոց յիշողութեան մէջ անոր յաւերժացումն է: Հաղորդութիւնը սիրոյ կըրկնակ արտայայտութիւն մը կը ներփակէ. Քրիստոսի՝ որ ինքզինքը կու տայ եւ մարդոց՝ որոնք Քրիստոսի մէջ եւ Քրիստոսի միջոցով իրարու կը հաղորդակցին, իրարու կը միանան: Արդէն «Հաղորդութիւն» բառն իսկ կ'արտայայտէ սիրոյ այս կրկնակ շարժումը, շրջադարձութիւնը: Քրիստոնէութեան առաջին իսկ շրջաններէն քրիստոնեաները լրիւ գիտակցած էին, մանաւանդ թէ շատ աւելի խորապէս քան յետագային, Հաղորդութեան խորհուրդին պարփակած այս իմաստին: Ս. Պողոս շօշափելի իրապաշտութեամբ մը կ'ըսէր. «Քանի որ մէկ հացէ կը ճաշակենք՝ բոլորս մէկ մարմին ենք» (Ա. Կոր. Ժ, 17): Իսկ Հաղորդութեան խորհուրդին կատարումը, զոր մենք այսօր կը կոչենք «Պատարագ» այդ սկզբնական շրջաններուն կղզիացած չէր կեանքի առօրեայ մարդկային եւ ընկերային իրակապութենէն: Հաղորդութեան կատարումին կ'ընկերանար համեստ ճաշնութեան: Հաղորդութեան կատարումին կ'ընկերանար համեստ ճաշնութեան մը կամ ընթրիք մը, որուն իսկոյն տրուեցաւ Հաղորդութեան խորհուրդին իսկութիւնը արտայայտող անուն մը՝ «ազապ», յունարէն ἀγάπη բառէն՝ որ կը նշանակէ սէր: Այդ նախնական «ազապ»ներուն մասամբ շարունակութիւնը կարելի է նկատել մեր այսօրուան սիրոյ սեղանները կամ մատաղները:

Պարզ է թէ՛ եթէ Հաղորդութիւնը, իր հարազատ իմաստով, սիրոյ խորհուրդ մըն է, բնականոն պէտք է նկատուի քրիստոնեաներու համար՝ անոր յաճախակի մերձեցումը, իբրեւ արտայայտութիւն՝ Քրիստոսի հետ եւ իրարու միջեւ իրենց սերտ հաղորդակցութեան: Սակայն ծանօթ է որ ըլլա՛յ Արեւելի, ըլլա՛յ Արեւմուտքի Եկեղեցիներուն մէջ տեսակէտներու որոշ յեղաշրջում մը տեղի ունեցած է դարերու ընթացքին՝ Հաղորդութեան մերձեցումի յաճախութեան առընչութեամբ: Նախնական Եկեղեցւոյ մէջ, ըլլա՛յ Արեւելք՝ թէ Արեւմուտք, կը տիրէ, ինչպէս յայտնի է նաեւ վերի ըսուածներէն, յաճախակի մերձեցումի տեսակէտը: Բայց ասիկա հետզհետէ տեղիք կու տայ, յատկապէս Միջին Դարու տեւողութեամբ, իր տիրապետութիւնը տարածող հակընդդէմ տեսակէտին, որ յաճախակի մերձեցումը կը նկատէր իբրեւ յարգանքի ու պատկառանքի պակաս մը խորհուրդին հանդէպ: Միեւնոյն ատեն երեւան կու դան մերձեցումը դժուարացնող գործնական պայմանները՝ ինչպէս խիստ ծովափնային թիւն եւլն: Այս դրութիւնը Արեւելի մէջ կը հասնի մինչեւ մեր օ-

սել չենք ուզեր թէ ան զուրկ ըլլայ տեսական խորքէ մը, այլ թէ ամէն ինչ էապէս կեանքի եւ գործողութեան ի սպաս դրուած է:

Ճառին գլխաւոր բնաւորութեան երկուքի կը վերածուին. ստեղծող հաղորդուիլ եւ արժանաւոր կերպով հաղորդուիլ: Իսկ ճառին կառոյցը կարելի է երեք մասերու բաժնել: Առաջինին մէջ՝ որ համառոտագոյնն է եւ կրնայ գուցէ իբրեւ տեսակ մը ներածութիւն նկատուիլ, կը խօսուի ընդհանուր կերպով՝ հաղորդութիւն անհրաժեշտութեան մասին, որ կը զօրէ քրիստոնեային համար: Երկրորդին մէջ՝ Մանդակունի գործողութիւն, բայց միանգամայն հեղինակաւոր շեշտով մը կը յորդորէ հաւատացեալները արժանապէս ընդունելու այդ մեծ խորհուրդը: Երրորդը, որ սերտօրէն առնչակից է առաջինին, կը ծանրանայ Քրիստոսի հոգեւոր սեղանէն ստեղծուող յազնալու կարեւորութեան ու պարտաւորութեան վրայ: Կայ տակաւին եզրափակիչ հատուած մըն ալ, ուր հեղինակը գրեթէ ճառին բովանդակութիւնը կ'ամփոփէ ու կը թուէ արժանապէս մերձեցումի պայմանները:

Կարելի էր երկու կերպով մօտենալ ճառին վերլուծումին: Ա) Վերահանելով անոր խորքէն այն հիմնական տարրը կամ տարրերը, որոնցմէ տրամաբանական շարկապումով մը կը հետեւին միւս տրեւանքները: Բ) Հետեւելով նոյնինքն հեղինակին ընտրած կարգին՝ որուն պատճառաբանութիւնները կը յառաջնթանան ոչ թէ տեսական, այլ գործնական պահանջներու համաձայն: Նախընտրեցինք այս երկրորդ կերպը՝ աւելի հաւատարմօրէն ցոյցանելու համար հեղինակին միտքը:

* * *

Ճառը կը բացուի սոսկումի եւ արհաւիրքի տեսարանով մը: Հեղինակը, որ ճարտար է տրամական կացութիւններ ստեղծելու, զանոնք անձնաւորելու եւ անձնականացնելու մէջ, ինքզինքը երկընտրանքի մը առջեւ կը զգայ՝ Երկընտրանք մը անհրաժեշտ եւ ահաւոր, որով միտքը կը վարանի ու կը տարուբերի դալարուն ալիքներու նման: Մերձենալ խորհուրդին, եւ ահա՛ մարդուս անարժանութիւնը կը կանգնի իր դիմաց՝ մինչ անդին անարժանութեամբ մերձեցումն ալ կը ծանրանայ խղճին վրայ իբրեւ քրէական յանցանք մը: Իսկ հեռանալ, փախչիլ, մեկուսանալ խորհուրդէն՝ հաւասարապէս անելի կը մատնէ: Ով որ այս լուծումը կ'ընդգրկէ՝ ցոյց կու տայ թէ չէ հասկցած խորհուրդին նշանակութիւնը եւ ընձեռած չընորհներուն զօրութիւնը: Ապա Մանդակունի կ'անցնի թուելու, ա-

1. Ոճային այս առանձնայատկութիւններու մասին՝ տե՛ս Թափանցող վերլուծումը 4. Մ. ՔԵՆՆԵՐԵԱՆԻ, յիշ. գործ, էջ 109 յջ.:

ռանց որոշ կարգի մը, զանազան շարժառիթներ՝ որոնք պէտք են մղել քրիստոնեան՝ Քրիստոսի մարմինին ու արեան մէջ իր հոգիին կենսագործիչ սնունդը փնտռելու: Հրաժարիլ անկէ՝ կը նշանակէ հրաժարիլ կեանքէն: Քրիստոս ինքն է որ կը հաստատէ. «Ես եմ հացն կենաց... եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդու եւ արբիք կենաց... եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդու եւ արբիք կենաց...» (Յովհ. 2, 48 եւ 54): Մանդակունի կը մեկնէ Քրիստոսի այս խօսքերը՝ մատնանշելով անոնց պատճառը. «Որ հեռի է ի սուրբ խորհրդոյն դիւրաւ ընդունի զախտ սատանայական եւ օթեման լինի նմա հանապազ»²: Քրիստոսի սուրբ սեղանէն ճաշակելու կամ չճաշակելու հարցը կը վերածուի հոսկ՝ կա՛մ Ս. Հոգիին շնորհները վայելելու եւ կամ անոնցմէ զուրկ հոսկ՝ կա՛մ Ս. Հոգիին շնորհները վայելելու եւ կամ անոնցմէ զուրկ մնալու երկընտրութեան: Ուստի ով որ չի փութար անձկանօք Քրիստոսի սարճած սեղանին՝ չի կրնար նկատուիլ եւ ոչ իսկ հարազատ տոսի սարճած սեղանին՝ չի կրնար նկատուիլ եւ ոչ իսկ հարազատ քրիստոնեայ մը: «Եւ արդ տես եւ զյիմարութիւնդ քո փարատեա ի քէն, զթերահաւատութիւնդ քո ուղղեա, զծուրութիւնդ ի փոյթ յորդորեա եւ փութար սրբիլ ի մեղաց, եւ մեծաւ փափաքանօք փութար ի սուրբ սեղանն հոգեւոր, զի մի՛ ի քրիստոնէական անուանէ՞ր մերժեսցիս»³:

Մեր կարծիքով, այս զանազան նկատողութիւնները իրենց լաւագոյն համադրութիւնը կը գտնեն այն դեղեցիկ սահմանումին մէջ՝ զոր կու տայ Մանդակունի քրիստոնէութեան մասին եւ ուր շատ յաճող կերպով կ'ընդգծուի քրիստոնէական կեանքի եւ Հաղորդութեան խորհուրդին միջեւ տիրող սերտ յարաբերութիւնը: «Զի քրիստոնէութիւնն հաւատքն են եւ մկրտութիւն եւ վայելումն սրբոյ խորհրդոյն եւ որ յայսմանէ հեռի է եւ թերի, թերի է ի քրիստոնէութենէ. զի ոչ Քրիստոս ի նմա բնակէ եւ ոչ նա ի Քրիստոս. քանզի որ ուտէ, ոչ ի մարմնոյ իմմէ, նա յիս բնակեսցէ եւ ես ի նմա»⁴: Այս սահմանը, ինչպէս յայտնի է, կը հիմնուի ուղղակի Աւետարանի՝ եւ մանր, ինչպէս յայտնի է, կը հիմնուի ուղղակի Աւետարանի՝ Հաղորդութեան յատկապէս Ս. Յովհաննէսի Աւետարանին Հաղորդութեան ճառին վարդապետութեան վրայ: Դիտել տանք որ քրիստոնէական կեանքի վարդապետութեան մը յատկապէս Ս. Յովհաննէսի Հաղորդութեան ճառը, այս ըմբռնումը, ինչպէս առհասարակ Եկեղեցւոյ Հայրերու մօտ, Մանդակունիի քով ալ, հեռու է տարտամ ու անդորրապաշտ (quietist) կրօնականութեան մը յանգելու վտանգէն, որով պիտի չէզոքանար բարոյական մարդին մէջ մարդուն կամեցողական ճիշդ: Բաւ նկատի առնել այս տեսակէտէն՝ գրեթէ բոլոր ճառերուն բովանդակութիւնը, որոնք բժականորէն վեր կը հանեն մարդկային պաշտօնականութեան ծանրութիւնը մարդուս բարոյական ապրումին

2. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՍԵ ԺԱՌԲ, ՎԵՆԵՏԻԿ, 1860, էջ 168:

3. Անդ:

4. Անդ:

